

17627

370.1

5-26

1888

2-4146a

۷۱۵

ՄԱՆԿԱՆՑ ԱՌԱՋԻՆ ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐԸ

معارف عمومیہ نظارت جملہ سنک ۶ جادی الاول ۳۰۶ و ۲۷
کانون اول ۳۰۴ تاریخی و ۹۶۱ نومرولی رخصتنامہ سیلہ
نشر اولتشدیر

مصارفی آمریقان مسیونر شرکتی طرفندن تسوید اولتهدرق
طبع اولتشدیر

2001

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՅՅԱՃԵԱՆ

1888

2010

370.1
15-26

hmf

APM
2-4146a

310.1
J-26

44531-ակ.

ՄԱՆԿԱՆՑ ԱՌԱՋԻՆ ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐԸ

—o—

ԾՆՈՂԱՑ ՌԻՂՂԵԱԼ ՔԱՆԻ ՄԸ ԼՈՒՐՁ ԽՕՍՔԵՐ

Կան շատ դպրոցներ Եւրոպա եւ Ամե-
րիկա, որ երեք տարեկան մանուկներ կ'ըն-
դունին. բայց մանուկներն այդ տարիքէն
առաջ ալ դպրոցի մէջ կը գտնուին: Տունն
է մանկան առաջին դպրոցը, եւ ծնողք էն
մանկան բարի կամ չար առաջին վարժա-
պետները:

Մանկան մը առաջին անգամ տեսած ե-
րեսը իւր մօր երեսն է, առաջին անգամ
լսած ձայնը մօր ձայնն է, եւ նա առա-
ջին անգամ անո՛ր ճամբաները եւ գործե-
րը կը գիտէ: Մեծ տարբերութիւն չկայ
մօր եւ հօր մէջտեղ. մանուկ մը շուտով
կը ճանչնայ իւր հայրը, բայց ամենէն ա-
ռաջ իւր մայրը կը ճանչնայ:

Մանուկ մը այրուբէնը ճանչնալէն շատ
առաջ կը ճանչնայ իւր հայրը եւ մայրը
տան մէջ: Դիւրին է ըսել թէ մանուկ մը
ո՛րչափ կանուխ կը սկսի բաներ սորվիլ իւր
տեսածներէն եւ լսածներէն: Գրեթէ այն
ինչ կը նայի իւր մօր երեսը եւ կը Ժպտի,
կը սկսի սորվիլ իւր մօրմէն. եւ այն Ժա-


20750

մանակէն որ կը սկսի ձայներ հանել եւ ոտքը ձեռքը շարժել իւր հօր տուն եկած ժամանակը, հայրը կ'ըլլայ անոր վարժապետը: Նոյն իսկ օրորոցէն կը սկսի մանուկը սորվիլ: Ի սկզբան չհասկնար ամէն բան որ կը տեսնէ թէ իւր հայրը եւ մայրը կ'ընեն եւ կը լսէ թէ կը խօսին: Ի սկզբան միայն կը տեսնէ եւ կը լսէ: Բայց մինչ կը տեսնէ եւ կը լսէ, կը սկսի տալ ուշադրութիւն եւ դիտել, եւ քանի որ կը մեծնայ, աւելի շատ կը դիտէ հետզհետէ, եւ շուտով կը սկսի անոնց վարքն օրինակել. վասն զի օրինակելը հասկնալէն առաջ է կարգաւ: Մանուկ մը բառեր կը հաւաքէ իւր մտաց մէջ առանց գիտնալու թէ ինչ նշանակութիւն ունին, եւ կ'ընէ ինչ որ կ'ընեն իւր հայրը եւ մայրը առանց գիտնալու թէ ինչո՞ւ կ'ընեն այնպէս: Օրինակելու համար պէտք չէ շատ գիտութիւն կամ հասկցողութիւն. եւ շատ փոքր մանուկ մը անգամ բաւական բան գիտէ այդ մասին:

Շատ բաներ կախում ունին սա պարագայէն թէ առաջին անգամ ինչ տեսակ օրինակ կը ներկայացուի. վասն զի հաւանապէս այն է որ կանխագոյն դասերը ամենէն երկար ժամանակ տեսն

րայ: Մանուկ մը չկրնար դիւրաւ մոռնալ իւր մանկութեան դասերը. եւ եթէ մոռնայ իսկ՝ դարձեալ միտքը կը բերէ: Կանուխ տպաւորուած դասերը կրնան անջինջ մնալ մտքին վրայ բոլոր կեանքին մէջ. ներկայացուած առաջին օրինակը թերեւս պիտի կազմէ մանկան յաւիտենական բարքը: Որչափ բաներ կախեալ են առաջին օրինակէն եւ կանխագոյն դասերէն:

Ով ծնողք, մասնաւորապէս դուք, մայրեր, յիշեցէք որ ձեր մանուկները միշտ ձեզ իրենց աչաց առջեւ ունին եւ կը լսեն ձեր խօսքերը: Ճշմարիտ է որ հայրերը առ հասարակ ամէն հեռի տեղեր գործով զբաղեալ են օրուան մեծ մասը, բայց մայրերը կը գտնուին տունը իրենց զաւակաց հետ: Մայրեր, ինչ որ դուք կ'ընէք, ձեր փոքրիկ զաւակները կը տեսնեն. ամէն ինչ որ կը խօսիք, կը լսեն: Եթէ դուրս վազեն խաղալու, շուտով դարձեալ տուն կը վազեն, եւ հոն կը գտնեն իրենց մայրը: Մայրն է որ անկողնէն կը հանէ զանոնք առաւօտուն, մայրն է որ անկողին կը դնէ զանոնք երեկոյին, եւ մայրն է որ կուտայ անոնց ուտելիքը: Մինչ անոնք շատ փոքր են, մայրը անոնց զրեթէ ամէն բանն է: Թերեւս ուրիշներ չգիտնան թէ ինչ վարք



ունիս . բայց զաւակներդ գիտեն , վասն զի անոնք միշտ քովդ կը գտնուին : Փոքրիկները շատ մը աւելի դիտողութիւն կ'ընեն եւ ծանօթութիւն կը ստանան քան որչափ կը խորհին մարդիկ . եւ ձեր փոքրիկները գրեթէ միշտ ծանօթութիւն կը ստանան ձեր վրայ : Միտ գիր թէ ի՞նչ կ'ընես , վասն զի անոնք կը տեսնեն . զգուշացիւր թէ ի՞նչ կը խօսիս , վասն զի անոնք կը լսեն :

Ծնողք պէտք է որ սկսին սորվեցունել իրենց զաւակաց այն ինչ կարող կ'ըլլան անոնք սորվիլ : Եթէ աղէկ բաներ չսորվեցունես , գէշ բաներ պիտի սորվին : Ծնողք պէտք է որ իրենց զաւակաց կանխագոյն , եւ ինչպէս «առջին» նոյնպէս նաեւ լաւագոյն վարժապետներն ըլլան : Ով մայրեր , դեռ ձեր շուրջ գտնուող ուրիշ անձինք ձեր զաւակներուն գէշ բաներ չսորվեցուցած՝ դուք բարի բաներ սորվեցուցէք անոնց : Սորվեցուցէք անոնց նոյն իսկ օրորոցէն սկսեալ : Մի խորհիւք թէ ձեր բոլոր պարտականութիւնն է մնուցանել զանոնք եւ հագուեցունել . այո , անոնք կարօտ են կերակրոյ եւ հանգերձի , բայց կարօտ են նաեւ սորվելու : Աստուած զձեզ պահապան դրած է ձեր զաւակաց : Կը

հրամայէ ձեզ կերակրել եւ հագուեցունել զանոնք իւր ձեզի տուած բարիքներով , բայց կը հրամայէ ձեզի նաեւ կրօնէլ զանոնք :

Երբ Փարաւոնին աղջիկը գտաւ Մովսէս մանուկը , յանձնեց զնա բուն անոր մօրը , չգիտնալով թէ այն կինը մանուկին մայրն էր . եւ սա խօսքն ըսաւ անոր . «Առ աս տղան՝ որ մնուցանես ինձի համար , ու ես քու վարձքդ կու տամ :» Աստուած դիտէ որ դուն քու զաւակիդ մայրն ես , վասն զի նա ըրաւ քեզ անոր մայր . եւ ինք կը գատէ քեզ բոլոր ուրիշ կանանց մէջէն , եւ կ'ըսէ քեզի քու զաւակիդ համար , «Առ աս տղան՝ որ մնուցանես ինձի համար :» Տղան քուկդ է , բայց անորն ալ է : Տուաւ զնա քեզի՝ քուկդ ըլլալու համար , բայց չհրաժարեցաւ անոր տէրն ըլլալէ : Ամէն ինչ որ կու տայ մեզի՝ կու տայ իբրեւ աւանդ . մեր քով կը պահենք զանոնք Աստուծոյ համար , եւ պարտական ենք անոնց հաշիւը տալ անոր : Այսպէս են նաեւ զաւակները : Անոնք «Տէրովք ժառանգութիւնը եւ պարգեւն են ,» բայց նաեւ են «անոր» : Ծնողք պարտին մնուցանել եւ կրթել անոնք Աստուծոյ համար :

Մովսիսի մայրը պիտի ընդունէր Քրիստոսը , թէպէտ էր անոր մայրը : Աստուած պիտի

տայ վարձք, եթէ ոչ ճիշդ վարձկանի վարձք, բայց պիտի տայ վարձք մը: Քու զաւակացդ դէպի քեզ «Իբ ո՞չ ապաքէն վարձք է: Ո՞չ ապաքէն վարձք է երբ քու ծերութեան հասակիդ մէջ անոնք հաճոյք կը զգան օգնելով քեզի: Ո՞չ ապաքէն վարձք է տեսնել անոնց մեծնալը Աստուծոյ երկիւղին եւ սիրոյն մէջ: Աստուած այսպիսի վարձքեր պիտի տայ այն ծնողաց որ իրենց զաւակները կը կրթեն Աստուծոյ համար: Մովսէս կրթուեցաւ ապրիլ թագաւորին աղջկան քով եւ զաւկի պէս ըլլալ անոր, բայց Աստուած անկէ աւելի աղէկ բաներ պահած է այն տղայոց որ կը կրթութուն իրեն համար: Մեծցուցէք զանոնք «Տէրօջը վարժութիւնովը ու խրատովը,» եւ նա պիտի օրհնէ թէ՛ ձեզ եւ թէ՛ զանոնք, եւ պիտի ընդունի զանոնք իւր երկնային թագաւորութեան մէջ: Ի՞նչ ճոխ վարձք է եթէ ծնողք եւ զաւակունք ի միասին ուրախանան անոր առջեւ:

Ծնողաց տալու կրթութիւնը կը սկսի անոնց զաւակներուն դպրոց երթալէն շատ առաջ, եւ այնուհետեւ չդադրի զանոնք կրթելու պարտականութիւնը: Ինչու պէտք է որ դադրի այն ցորձափ տղայք կը զըտնուին իրենց ծնողաց երգիքին ներքեւ: Եւ

մինչեւ անգամ երբ անոնք դուրս կ'ելլեն աշխարհի մէջ զբաղելու այլ եւ այլ գործերով, ծնողք տակաւին պարտին պահել իրենց ազդեցութիւնն անոնց վրայ: Երբ փոքրիկ զաւակդ կը սկսի դպրոց երթալ, մի կարծեր թէ կրնաս բոլորովին յանձնել զնա վարժապետին, եւ դուն այլ եւս ազատ ես անոր կրթութեանն համար անձամբ աշխատութիւն տալէ: Այդպէս ընելովդ զաւակդ կորուստ կ'ընէ քան թէ շահ՝ դպրոց երթալով. վասն զի կը կորսընցունէ իւր բնական վարժապետը, իւր մայրը, եւ փոխանակ անոր կ'ունենայ օտարական մը միայն: Թող զաւակդ շահ ունենայ դպրոց երթալով. Թող ունենայ երկու վարժապետ փոխանակ մէկի: դուն եւ դպրոցի վարժապետը: Եւ սակայն տակաւին քիչ քիչ վարժապետը դո՛ւն ըլլալու ես. վասն զի զաւակդ վարժապետին քով ցերեկը միայն չորս կամ հինգ ժամ կը մնայ, բայց մնացած բոլոր ժամանակը քո՛ւ քովդ կը գտնուի:

Երբեմն այնպէս կը պատահի որ տղայոց տան մէջ տեսածը եւ լսածը տարբեր կ'ըլլայ դպրոցին մէջ անոնց սորվածներէն: Թող քու տղոցդ համար ալ չըլլայ այսպէս: Թող տեսնեն անոնք թէ՛ դպրոցի կրթու-

Թիւնը եւ տան կրթութիւնը նոյն են : Անոնք Սուրբ Գիրք դաս կ'առնուն զպրոցը . նոյնը տո՛ւնն ալ թող դաս առնուն : Դըպըրոցը կը սորվին ուղիղ եւ բարի ըլլալ . թող ուրիշ բան չտեսնեն եւ չլսեն տունը բայց եթէ բարութիւն : Դպրոցին մէջ ա՛նոնց զգուշութիւն կը տրուի ծուռ գործերու դէմ . թող չտեսնեն տան մէջ ծուռ գործեր կամ լսեն չար խօսքեր : Յաւալի է որ զաւակներուդ ըսել տաս թէ “Վարժապետը կ'ըսէ թէ մարդ պէտք չէ որ դէշ խօսքեր խօսի . բայց հայրիկս կը խօսի .” կամ, “Վարժապետը կ'ըսէ թէ պէտք է որ կարդանք Սուրբ Գիրքը, եւ աղօթք ընենք . բայց հայրիկս եւ մայրիկս այսպէս չեն ըներ .” կամ, “Վարժապետը կ'ըսէ որ կիրակին սուրբ պահենք, եւ եկեղեցի երթանք . բայց հայրիկս եւ մայրիկս շատ անգամ չեն երթար եկեղեցի :” Եթէ վարժապետներն եւ ծնողք միաբան չըլլան, տղաք չուտով կ'իմանան . եւ որո՞ց կը հետեւին անոնք : Ի՛նչպէս կրնաք ակնկալել անոնցմէ թէ պիտի պահեն ինչ որ կը սորվին իրենց բարի վարժապետէն, եթէ իրենց հօրմէն եւ մօրմէն կը տեսնեն ճիշդ հակառակը : Ծնողք չեն խորհիր երբ դէշ խօսքեր կը հանեն իրենց բերաններէն, եւ զանց կ'ընեն Սուրբ

Գիրք կարդալը եւ աղօթք ընելը, եւ կիրակին կ'աւրեն, թէ իրենց զաւակներուն ալ կը սորվեցունեն նոյնն ընել : “Հայրս եւ մայրս այսպէս կ'ընէին” ըսելը պիտի չարդարացունէ զանոնք, բայց ի՛նչ անաւոր պատասխանատուութեան տակ կը դնէք դուք զձեզ :

Մեծ բաներէն մին որոյ մեծ ուշադրութիւն տալ պարտին ծնողք, այս է թէ իրենց զաւակներն ինչ տեսակ ընկերաց հետ առնչութիւն կ'ընեն . Մինչեւ անգամ շատ մանր տղաք ընկերներ, բարեկամներ կը ստանան, տակաւին երբեք դպրոց չգացած : Հոգ տարէք որ ձեր մանր տղաքը չարերու հետ չընկերանան : Երբ դպրոց կ'երթան, անչուշտ ուրիշ տղոց հետ կ'ընկերանան . բայց մինչեւ անգամ այն ատեն կրնաս հոգ տանիլ որ բարի տղոց հետ բարեկամ ըլլան : Խաղի ժամերու մէջ, եւ պարապուրդներու ժամանակ, նաեւ ամարումն իրիկունները, տղաք յաճախ կ'ըլլան իրարու քով . եւ անոնց մէջ կը գտնուին այնպիսիներ որ ուրիշները կը մոլորցունեն եւ չար բաներ կը սորվեցունեն անոնց : Զգուշացուր քու զաւակներդ այնպիսիներէ՛ որչափ որ կարելի է . եւ եթէ երբեք կը տեսնես որ քու մանչդ կամ աղջիկդ չար ընթացքի մէջ է

չատ հաստատուն կամք ունեցիր ուղղել զնա : Թերեւս զաւակը չսիրեր այդ բանը , բայց քու այդ ըրածդ ճշմարիտ բարիք է անոր եւ քու պարտականութիւնդ է : Չես գիտեր թէ ինչ վնաս կրնայ յառաջ դալ մէկ չար ընկերէ մը :

Հաստատուն կամք ցուցուր զաւակացդ առջեւ , բայց նոյն ժամանակ եղիր քաղցր : Բնաւ մի սպառնար ընել ինչ որ միտք չունիս ընել . բնաւ մի ըսեր ինչ որ չես ուզեր հասկցունել : Խօսելէ առաջ խորհէ . եւ թող տեսնեն անոնք որ բարեմտութեամբ կը խօսին : Եթէ կը ստիպուիս պատժել զանոնք , պատժէ պաղ արեամբ եւ չափաւոր կերպով , եւ ոչ թէ խստիւ կամ կիրքով : Մի սպառնար զաւակացդ , մայրերէ ոմանց նման , սապէս խօսքերով , Գլուխդ կը վերցունեմ , եւ այն , Տղաք չուտով կը սորվին թէ ինչ արժէք ունին այսպիսի սպառնալիքներ : Չաւակացդ հետ միշտ մեղմ եւ քաղցր խօսէ , վրան զի տղաք ալ իրենց զգացումներն ունին : Մինչեւ անգամ երբ կը ստիպուիս յանդիմանել զանոնք , քաղցրութեամբ յանդիմանէ : Չաւակներդ թող տեսնեն թէ դուն կը սիրես զանոնք , եւ թէ կը ցաւիս զանոնք պատժելուդ համար : Թող անոնք միշտ կարող ըլլան յիշել ի-

րենց մօր խօսքերը նաեւ հօր խօսքերը , իրեւ քաղցր խօսքեր , եւ բարի խօսքեր , եւ ճշմարիտ խօսքեր , եւ մաքուր եւ սուրբ խօսքեր : Չաւակներդ բնաւ չսորվին քե- նէ չար խօսք , բնաւ չլսեն քու շրթունքէդ երգում կամ ստուծիւն . անոնք ինչ որ լսեն չուտով կը սորվին ըսել : Եթէ կանուխ կամ ուշ պիտի լսեն այսպիսի խօսքեր , թող +ե՛ն չլսեն :

Չաւակներուդ կանուխ սորվեցուր սիրել Սուրբ Գիրքը : Թող տեսնեն թէ դու ինքնդ կը սիրես զայն , այնպէս որ յիշեն իրենց բոլոր կենաց մէջ թէ իրենց հայրը եւ մայրը սովորութիւն ունէին ամէն օր կարդալ Սուրբ Գիրքը : Կարգալ Սուրբ Գիրքը ամէն օր քու զաւակներուդ ամենուն հետ ընտանեկան պաշտաման ժամանակ : Թող զաւակներդ կարգան քեզի Սուրբ Գիրքը այն ինչ կարող կ'ըլլան կարգալ որ եւ իցէ բան մը . առաջ քիչ մը , թերեւս միայն մէկ համար մը , եւ յետոյ աւելի , հետզհետէ : Քաջալերէ զանոնք բերնուց համարներ սորվիլ , այնպէս որ իրենց միտքերուն մէջ ամբարուած զանձ ունենան : Բայց Աստուծոյ Գիրքը բեռ մի՛ ըներ անոնց . ջանք ըրէ առաջնորդել զանոնք սիրել զայն : Երբեմն քեզի պիտի հարցնեն

թէ ինչ կը նշանակէ այս կամ այն խօսքը :
Ջանա գոհացուցիչ պատասխան տալ ա-
նոնց : Այս բանը զքեզ պիտի ստիպէ խոր-
հիլ : Մենք շատ բան կրնանք սորվիլ տը-
ղոց մեզի ըրած հարցումներէն :

Ընտանեկան աղօթք ըրէ տան մէջ . Այս
է կերպ մը տղաքը վարժեցունելու աղօթ-
քի ունակութեան : Օրը գոնէ անգամ մը
թող ամբողջ տունը աղօթեն ի միասին :
Աբրահամ աստանդական կեանք մը ունէր ,
չատ անգամ տեղէ տեղ կ'երթար . բայց
ուր որ կանգնէր իւր վրանը , հոն սեղան
մի եւս կը կանգնէր . ուր եւ բնակէր , հոն
պաշտօն կը մատուցանէր Աստուծոյ իւր
բոլոր տունովը . եւ Աստուած ըսաւ թէ
պիտի օրհնէր զնա ատոր համար : Աբրա-
համի նման եղիւր . ուր եւ ապրիս , թող
քու տունդ ըլլայ տուն աղօթից : Շատ
տղաք եւ շատ ծառաներ պատճառ ունե-
ցած են չնորհակալ ըլլալ Աստուծոյ իրենց
բոլոր կենաց մէջ , վասն զի ապրած էին
այնպիսի տան մէջ ուր կար ընտանեկան
աղօթք : Դժուարութիւններ կան : Շատ
բաներու մէջ ալ կան դժուարութիւններ :
Բայց միտք բեր հին առակը . “ Ուր որ
կամք կայ , հոն ճամբայ կայ .” եւ այս ճըշ-
մարիտ է ըստ մեծի մասին :

Բայց ընտանեկան աղօթքն է միայն մէկ
կերպը : Սորվեցուր զաւակներուդ նաեւ
առանձին աղօթել : Անոնք իրենց առաջին
աղօթքը ըսելու են իրենց մօր ծնգաց վը-
այ . եւ անշուշտ այս է տեսարան մը զոր
դիտելով կ'ուրախանան հրեշտակը երկնից
մէջ— փոքրիկ մանուկ մը որ կը թոթովէ
իւր առաջին աղօթքը իւր մօրը ծնգաց
վրայ : Սկսէ շատ կանուխ : Այն ատեն երբ
չատ փոքր են , անոնք տակաւին բառերը
պարզ արտասանելու կարող չեղած , սորվե-
ցուր անոնց աղօթել իրենց Հօրը որ երկինքն
է : Նա տաճութիւն չզգար անոնց անկա-
տար խօսքերէն , վասն զի կը սիրէ մանր
տղաքը եւ անոնց աղօթքները : Անտարա-
կոյս ոմանք այն տղոցմէն որոնք անոնց
մայրերը Յիսուսի բերին , թոթովելով մի-
այն կրնային ըսել անոր անունը եթէ եր-
բէք կարող էին ըսել . բայց ըսաւ նա ,
“ թող տուէք ատ մանր տղոցը որ ինձի
գան , եւ մի արգիլէք ատոնք .” Դուն ալ
եղիւր այն Հրեայ մայրերուն նման : Խօսէ
զաւակացւ Յիսուսի վրայով . սորվեցուր
անոնց ըսել անոր անունը , եւ տար զա-
նոնք Հօր Աստուծոյ անոր միջոցաւ : “ Ով
Հայր մեր որ երկինքն էս” խօսքը այս կը
ցուցնէ մօտ դալ Աստուծոյ եւ կը յարմարի

թէ՛ մեծերու եւ թէ՛ փոքրերու : Սորվեցուր զաւակացդ Տէրունական Աղօթքը, եւ կանուխ սորվեցուր : Ըսէ՛ անոնց թէ՛ որուն աղօթքն է այն, եւ թէ՛ անոնց կը վերաբերի այն աղօթքը : Սորվեցուր անոնց ըսել զայն ամէն օր : Բայց մի թողուր որ լոկ չըթոնքով ըսեն առանց խորհելու անոր նշանակութեանը վրայ . բացատրէ՛ զայն մասն առ մասն, եւ սորվեցուր ըսել զայն ծանր ծանր եւ երկիւրզածութեամբ, աղաչելով իրենց երկնաւոր Հօրը իրենց Փրկչին անուամբ եւ իրենց Փրկչին խօսքերովը :

Բայց տղայք շուտով կը մեծնան եւ կ'անցնին իրենց մօր ծնգաց վրայ աղօթելու հասակէն : Երբ զաւակներդ այլ եւս չեն ըներ այդպէս, սորվեցուր անոնց աղօթել առանձինն, եւ նայէ՛ որ զանց չընեն զայն : Անոնք պէտք ունին օգնութեան . առաջին անգամ պէտք է սորվեցունել անոնց նոյն իսկ այն խօսքերը զորս ըսելու են : Բայց սորվեցուր անոնց նաեւ թէ՛ կրնան աղօթք ընել Աստուծոյ բուն իրենց խօսքերովը, եւ թէ՛ մեր Հայրը որ երկինքն է՝ մտիկ կ'ընէ մինչեւ անգամ փոքրիկ մանկան մը աղաչանքին եւ փափաքներուն : Եւ պատմէ՛ անոնց մեր օրհ-


նակ Փրկչին վրայով որ հիմա վերը երկինքն է եւ բարեխօսութիւն կ'ընէ անոնց համար, եւ սորվեցուր անոնց որ մշտ իրենց աղօթքները մատուցանեն Անոր անունով : Նաեւ պատմէ՛ անոնց Սուրբ Հոգւոյն վրայով, եւ թէ՛ ինչպէս նա կը յօժարեցունէ զանոնք աղօթք ընելու, եւ կ'օգնէ անոնց՝ աղօթք ընելու :

Տետրակիւս վերջերը պիտի դոնես աղօթքի քանի մը համառօտ ձեւեր տղայոց համար, որպէս զի ծնողք սորվեցունեն անոնց : Առաջին երկուքն արդարեւ շատ համառօտ են եւ շատ պարզ . տղոց համար պատրաստուած են անոնք որպէս զի ըսեն ծնգաց վրայ գալով իրենց մարց հետ, եւ կամ առանձին ըսեն իրենց փոքրիկ հասակին մէջ : Անոնց կրկին եւ կրկին ըսել տուր մինչեւ որ բերնուց սորվին, եւ աշխատէ՛ հասկցունել անոնց թէ՛ Աստուծոյ կը խօսին, եւ թէ՛ նա կը լսէ անոնց եւ կը սիրէ զանոնք : Պիտի գտնես նաեւ աղօթքի ուրիշ ձեւեր քու զաւակացդ համար զորս պարտին սորվիլ երբ քիչ մը աւելի մեծնան, վասն զի այն ատենն ալ կարօտ պիտի ըլլան օգնութեան : Ասոնք շատ փոքրերու համար չեն, այլ եօթը կամ ութ տարեկան եւ կամ աւելի մեծ տղայոց համար :

Եւ արդ, ծնողք, թոյլ տուէք ինձ անգամ մի եւս յիշեցունել ձեզ եռանդեամբ թէ որչափ շատ բաներ կախում ունին ձեռնէ: Բոլոր աշխարհի մէջ ոչ ոք կը գտնուի որ այնչափ բան ընելու կարող է ձեր զաւակաց որչափ դուք էք: Անոնք ձերն են: Աստուած ձեզի՛ յանձնած է զանոնք: Ուրիշներու յանձնած է իրենց զաւակները եւ ձեզի յանձնած է յերբնեք: Անոնք պիտի ապրին յաւիտեան: Դուք պարտական էք կրթել զանոնք Աստուծոյ համար. եւ անոնց համար պատասխան պիտի տաք անոր, թէ ի՞նչ սորվեցուցած էք անոնց, ի՞նչպէս առաջնորդած էք զանոնք, ի՞նչ օրինակ ցուցած էք անոնց, եւ ի՞նչպէս ապրած էք անոնց աչաց եւ ականջաց առջեւ: Աստուած զձեզ պատասխանատու ըրած է անոնց համար:

Ճշմարիտ է թէ ծնողքի մը կարողութեան ներքեւ չիմար տալ տղոց նոր սիրտ, կամ ընել տղաքը բոլորովին այնպէս ինչպէս ծնողք կ'ուզեն. այդ Աստուծոյ գործըն է եւ ո՛չ մարդու: Բայց Աստուած մարդուն ալ տուած է իւր բաժինը. եւ մասնաւորապէս ծնողաց կուտայ բաժին մը դէպ ի նոցա զաւակները: Չեր բաժինն է սորվեցունել, եւ անորը՝ օրհնել ձեր սոր-

վեցուցածը. ձեր բաժինն է աղօթել, եւ անորը՝ լսել եւ կատարել աղօթքը: ձերն է բարի օրինակ ըլլալ, եւ անորը՝ այնպէս ընել տղաքը որ հետեւին ձեր օրինակին: Չեր դէպ ի ձեր զաւակները պարտակալութեան մէջ մասն է աղօթք ընել անոնց համար. աղօթք ընել որպէս զի Աստուած կատարէ իրեն բաժին եղող գործը անոնց մէջ եւ անոնց համար, բայց դուք ալ պարտիք ձեր գործն ընել: Աղօթք եւ աչխատութիւնք թող ձեռք ձեռքի երթան, եւ անշուշտ պարապը պիտի չելին: Օրորոցէն սկսեալ կրթէ զաւակներդ Աստուծոյ համար: Մինչ անոնք տակաւին քովդ կը գտնուին՝ սորվեցուր անոնց, ցուցուր անոնց, առաջնորդէ զանոնք, եւ աղօթէ՛ անոնց համար: Եւ երբ անոնք կ'երթան քենէ հեռի եւ կը զբաղին աշխարհային գործերով, տակաւին դնա անոնց ետեւէն քու աղօթքներովդ, եւ միջոցներ գործածէ աղբելու անոնց վրայ՝ ինչպէս սիրող հայր մը կամ մայր մը միայն կարող են գործածել: Եւ ամէնքն ըրէ հաւատքով, հաւատք ընծայելով Աստուծոյ խօսած մէն մի խօսքին. եւ սա վստահութեամբ որ թէպէտ ըստ երեւութին յուսահատեցուցիչ պարագաներ տեսնուին; եւ սակայն



ի վախճանի պիտի կատարուի սա խօսքը .
« Կրթէ մանուկը իր ճամբան սկսած ատե-
նը , որ իր ծերութեան ատենն ալ անկէ
չխտտորի : »



ԱՌԱՒՕՏԵԱՆ ԱՂՕԹՔ

ՓՈՔԻ ՄԱՆԿԱՆՅ ՀԱՄԱՐ

Ով Աստուած , շնորհակալ եմ քենէ որ
այս գիշեր ապահով պահպանեցիր զիս եւ
հսկեցիր վրաս մինչ կը քնանայի : Կ'աղա-
չեմ քեզ օրհնէ՛ զիս այսօր , օրհնէ՛ նաեւ
իմ հայրս եւ մայրս , եղբայրներս եւ քոյ-
րերս : Պահէ զիս չարութենէ , ըրէ զիս
այսօր բարի , շնորհք տուր ինձի որ հա-
ճելի ըլլամ քեզի ամէն ինչ որ ընեմ : Լսէ
ինձի , ով Երկնաւոր Հայր , Յիսուս Քրիս-
տոսի համար : Ամէն :



ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՂՕԹՔ

ՓՈՔԻ ՄԱՆԿԱՆՅ ՀԱՄԱՐ

Երկնաւոր Հայր , շնորհակալ եմ քենէ
այսօր ինձի պարգեւած բարիքներուդ հա-
մար : Ենտրհակալ եմ քենէ որ տուիր ին-
ձի հայր եւ մայր , ուտելիք եւ հանդերձ եւ

ամէն բան : Ներէ ինձի այս օրուան դոր-
ժած բոլոր յանցանքներս : Ներէ ինձի կը-
ծու խօսքերուս եւ չար կիրքերուս հա-
մար : Պահպանէ զիս այս գիշեր . պահպա-
նէ մեզ ամէնքս եւ ապահով ըրէ վտան-
գէ եւ չարիքէ , Յիսուս Քրիստոսի հա-
մար : Ամէն :



ԱՌԱՒՕՏԵԱՆ ԱՂՕԹՔ

ՄԵԾ ՏՂՈՅ ՀԱՄԱՐ

Ով Աստուած , Երկնաւոր Հայր իմ , շը-
նորհակալութիւն կը մատուցանեմ քեզի
ինձի ցուցըցած բոլոր բարիքներուդ հա-
մար : Ենտրհակալ եմ քենէ որ պահպանե-
ցիր զիս բոլոր այս գիշերը եւ արժանա-
ցուցիր զիս դարձեալ կլլել այս առաւօտ
ողջ եւ առողջ : Իմ հետս եղիր եւ օրհնէ
զիս այսօր : Լեցուր իմ կարօտութիւններս .
պահպանէ զիս վտանգներէ եւ պահէ մեղ-
քէ : Տուր ինձ քու Սուրբ Հոգիդ . զօրա-
ցուր զիս ամէն փորձութեանց դէմ , եւ
պահէ զիս իյնալէ անոնց մէջ : Օգնէ ինձ
իմ ընելու ամէն գործերուս մէջ : Օրհնէ
բոլոր իմ սիրելի ազգականներս եւ բարե-
կամներս ուր որ կը գտնուին անոնք , եւ


օգնական եղիր անոնց, Յիսուս Քրիստոսի
իմ Փրկչիս համար : Ամէն :



ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՂՕԹՔ

ՄԵԾ ՏՂՈՅ ՀԱՄԱՐ

Ով Տէր, Աստուած իմ, կը ծնրադրեմ
քու առջեւդ այս իրիկուն չնորհակալ ըւ-
լալ քեզի ինձ ցուցըցած չնորհաց եւ սի-
րոյդ համար : Ամէն ինչ որ ունիմ՝ քննէ
կու գան . ես ի սրտէ չնորհակալ եմ քննէ
այս ամենուն համար : Երկնաւոր Հայր, զրկէ
քու Սուրբ Հոգիդ իմ սրտիս մէջ, եւ ա-
ռաջնորդէ ինձ սիրել քեզ եւ ծառայել
քեզի հիմա մինչ դեռահասակ եմ : Պահ-
պանէ զիս փորձութենէ, պահէ զիս ծուռ
ձամբաներ սորվելէ եւ չար օրինակներու
հետեւելէ : Ծնորհք տուր ինձ ատել ամէն
մեղք եւ չարութիւն : Ներէ ինձի այն ա-
մէն ծուռ գործերս զորս տեսած ես այսօր
իմ մէջս . վասն զի դուն կը տեսնես ամէն
ինչ որ կ'ընեմ, գիտես ամէն խօսքս եւ
խորհուրդս : Ծնորհէ որ իմ բոլոր մեղքերս
լուացուին Փրկչիս պատուական արիւնո-
վը : Պահպանէ այս գիշեր զիս եւ իմ սի-
րելիներս, եւ թող մեր ամենուս հետ ըւ-
լայ քու օրհնութիւնդ եւ խաղաղութիւնդ,
Յիսուս Քրիստոսի համար : Ամէն :



4 րոյ
2-4146a

2013

« Ազգային գրադարան



20981

NL0051393

